ՆՈՐԱՀԱՅՏ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՎԱԶ ՔԱՂԱՔԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՄԻ ՓԱՍՏԻ ՄԱՍԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ

Լինելով պրակտիկ բժիշկ, սեփական նախաձեռնությամբ զբաղվում եմ հայ բժշկության պատմության խնդիրներով և այդ թեմայով արդեն հրատարակել եմ երեք գիրք:

Վերջերս «Բռնադատված հայ բժիշկներ, 1918-1954թթ., Կենսագրական բառարան»-ի վրա աշխատելիս ՀՀ ԱԱԾ արխիվում հերթական բռնադատված բժշկի՝ ատամնաբույժ Հովհաննես Ստեփանի Ալթունյանի (1892-1973) գործը (N 9584) ուսումնասիրելիս հանդիպեցինք մի կարևոր փաստաթղթի: 1933թ. ՀԽՍՀ Պետքաղվարչության կողմից մի գործով ձերբակալված լինելու կապակցությամբ (որը համեմատաբար բարեհաջող ավարտ է ունեցել) ինքնակենսագրական գրելիս բժիշկ Հ. Ս. Ալթունյանը հանգամանորեն կանգ է առել հայրենի Սվազ (ք. Սեբաստիա, Արևմտյան Հայաստան) քաղաքում 1914-1915թթ. կատարված ողբերգական իրադարձությունների վրա: 1933թ. թանաքով գրված արևմտահայերեն ձեռագիրը 70 տարվա ընթացքում խունանալով դարձել է դժվարընթեռնելի, մինչդեռ ինքնակենսագրականի նույն թվականին, ժամանակի պահանջով ռուսերեն թարգմանված և մեքենագրված էջերը լավ ընթեռնելի են ու կարող են հանդիսանալ ականատեսի կողմից գրված կարևոր սկզբնաղբյուր և հավաստի փաստաթուղթ Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի Սվազ (Սեբաստիա) քաղաքում թուրք բարբարոսների կողմից իրականացված ոճրի իրական չափերի մասին: Կարևոր է նաև այն, որ ինքնակենսագրականը 1933թ. գրվել է հայ մտավորականի ընտանիքում ծնված, Սվազի թուրքական գիմնազիայում, Սեբաստիայի երկրորդային վարժարանում, Սեբաստիայի ֆրանսիական քոլեջում, Կ. Պոլսի բարձրագույն ատամնաբուժական վարժարանում, թուրքական զինվորական 6-ամսյա դպրոցում կրթություն ստացած և սպայի կոչման արժանացած 41-ամյա ատամնաբույժի կողմից, որը 1915թ. արդեն 23-ամյա երիտասարդ մտավորական էր: Նշենք, որ 1925թ. Խորհրդային Հայաստան ներգաղթած բժիշկը, ստալինյան բռնատիրության տարիներին ձերբակալված լինելով, այդ տարիների համար ահասարսուռ ՀԽՍՀ Պետքաղվարչու-

թյունում չէր կարող համարձակվել ինքնակենսագրականում նշույլ անգամ կեղծ կամ սխալ տեղեկություն գրել, մանավադ, որ այդ տարիներին Թուրքիան հանդիսանում էր ԽՍՀՄ-ի բարեկամ երկիր և նրա հասցեին արված որևէ զրպարտանք կարող էր խստագույնս պատժվել: Իսկ բժիշկ Հ. Ալթունյանն ինքնակենսագրականում գրում է, որ 1915թ. հունիսի 4-ին թուրքերը, հարցաքննելու պատճառաբանությամբ, Սեբաստիա քաղաքի ողջ հայությանը՝ շուրջ 80000 հոգի, հավաքել են մի տեղ ու ձերբակալել: Այնուհետև հայտարարել են, որ մասնագետները (բացի դաշնակցականներից) կարող են թողնվել քաղաքում՝քաղաքի բնակիչների (մահմեդականներ և ստիպողաբար մահմեդականություն ընդունած հայեր – *Հ. Մ.*), ինչպես նաև կայազորի զինվորների կարիքները հոգալու համար, իսկ մնացածը պետք է աքսորվեն: Շուրջ մեկ տասնյակ արհեստավորների ու մասնագետների հետ բժիշկ Ալթունյանը ևս, որպես ատամնաբույժ, թողնվել է քաղաքում:

Բժիշկը գրում է, որ հետագա օրերի ընթացքում քաղաքի թուրք ոստիկանապետը բոլոր մասնագետներին կանչել է իր մոտ և պահանջել իսլամ ընդունել: Սկզբում բոլորը հրաժարվել են, սակայն հաճախակի կրկնվող սպառնալից պահանջները և ահասարսուռ լուրն այն մասին, որ աքսորված 80000 սեբաստացիները, այդ թվում և իր ատամնաբույժ ավագ եղբայր Միհրան Ստեփանի Ալթունյանը, սպանվել են, ստիպում են, որ նրանք բոլորը, այդ թվում և ինքը, ընդունեն մահմեդականություն:

Ահա՝ հենվելով սեբաստահայ մտավորականի վկայության վրա ցանկանում ենք կատարել Սեբաստիայի ողբերգությանն առնչվող մի կարևոր ճշտում: Բերենք խնդրո առարկային վերաբերող երկու մեջբերում:

Մեջբերում՝1.

«Հայրենիքի ձայն» (14-10-1987) թերթի՝ «Նոր Սեբաստիա՝ ոսկե կամուրջ» հոդվածում ասվում է. «Եվ այսպես՝ մինչև 1915 թվականը: Հետո կոտորած ու ավեր, արյուն ու աքսոր: Սեբաստիա քաղաքն ու վիլայեթը պարպվեց 350 հազար հայերից»:

Մեջբերում՝ 2.

«Հայկական հարց», հանրագիտարանի (Եր.,1996) «Սեբաստիա» բառահոդվածում կարդում ենք.

«Մինչև 1914թ. Սեբաստիայում հայ բնակչության թիվը կազմել է 36000 մարդ:

1914թ. վերջին թուրքական իշխանությունները 100-ավոր սեբաստացիների քշել են հարկադիր աշխատանքի և կոտորել:

Բանակ զորակոչված բազմաթիվ հայերի զինաթափել են և գնդակահարել:

1915թ. մարտի 15-ին Սեբաստիայի 40 հայ կուսակցական գործիչների ձերբակալել են ու գնդակահարել:

Շուրջ 1000 առևանգված հայուհիների վաճառել են Կ. Պոլսի շուկաներում:

500 մտավորականների գնդակահարել են և ջրախեղդ արել:

Շուրջ 10 ակնառու ազգային գործիչների կախաղան են բարձրացրել:

1915թ. հունիսի 3-ին ձերբակալել և գնդակահարել են 3 500 հայերի:

1915թ. հունիսի 11-ին ձերբակալել և գնդակահարել են ևս շուրջ 900 հայերի:

Մինչև 1915թ. հուլիսի 4-ը երեք կարավաններով տեղահանվել է Սեբաստիայի ամբողջ հայ բնակչությունը՝ շուրջ 5850 ընտանիք:

Այսպիսով 1914-15թթ. ընթացքում գերեվարվել և սպանվել է Սեբաս-

տիայի 36000 հայ բնակչության 35000-ը:

Առաջին կարավանից Հալեպ են հասել ընդամենը 350 կին և երեխա:

Պետության կարիքների համար քաղաքում թողնված 70-80 հայ արհեստավորներին հոկտեմբերի 2-ին աքսորել են և սպանել:

1917-18թթ. Սեբաստիա են վերադարձել կոտորածներից փրկված ընդամենը 1500 սեբաստացիներ:

Կառավարության հրամանով բռնագաղթից կարող էին ազատվել միայն այն հայերը, ովքեր մահմեդականություն ընդունելու համար իրենց մանուկներին կհանձնեին իշխանություններին»:

Մենք չէինք ցանկանա կասկածել մասնագետների բերած վիճակագրական տվյալներին, սակայն նաև չենք կարող անտեսել 1915թ. Սեբաստիայում ապրած բնիկ սեբաստացի երիտասարդ մտավորականի, ողբերգական դեպքերից ընդամենը 18 տարի անց գրած ինքնակենսագրականում բերված հավաստի տեղեկությունը: Մանավանդ, որ բժիշկը Սեբաստիայում շարունակել է ապրել ևս 9 տարի՝ մինչև 1924թ., որից հետո ևս 1 տարի ապրել է Կ. Պոլսում: Ընդ որում՝ երիտասարդ ատամնաբույժի հայրն ու ավագ եղբայրը ևս ատամնաբույժներ էին և կրթության ու մասնագիտության բերումով, անկասկած, պետք է, որ լավ իմանային հայրենի քաղաքի բնակչության իրական թիվը:

Այսպիսով հարկ ենք համարում այս ողբերգական թվաբանության մեջ կատարել մի կարևոր ճշտում. 1915թ. ընթացքում Սեբաստիա (Սվազ) քաղաքից տեղահանվել, աքսորվել ու սպանվել է ոչ թե 35000 այլ շուրջ 80000 խաղաղ հայ բնակչություն, որը մոտավորապես 2,5 անգամ ավելին է, քան «Հայկական հարց» հանրագիտարանում բերված թիվը:

Կարևոր է նաև բժիշկ Հովհաննես Ալթունյանի վկայությունը՝ Սեբաստիայի հայ բնակչության մի մասին մահվան սպառնալիքի տակ մահմեդականացնելու փաստի մասին:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ միանգամայն համընկնում են ականատես Հ. Ալթունյանի և պատմաբան Ա. Մելքոնյանի հիշատակած՝ Սեբաստիայի հայերի զանգվածային ձերբակալման ամսաթիվը՝ 1915թ. հունիսի 3-4:

Բարեբախտաբար Սեբաստիայի հայաթափման այս ողբերգական փաստի մեջ կա նաև մեկ սփոփիչ դրվագ: ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակած, Լ. Խաչատրյանի և Ա. Բաբլումյանի կազմած «Ցուցակ հայոց ցեղասպանության զոհերի (1915-1923թթ.), Գիրք 1, Սեբաստիայի նահանգ» (Եր., 2004) գրքում բերված զոհվածների ընդհանուր ցուցակում 10 համարի տակ գրանցված ատամնաբույժ Հովհաննես Ալթունյանը ոչ թե զոհվել է Սեբաստիայում 1915թ., այլ մնալով հայաթափված քաղաքում, մահվան սպառնալիքի տակ ընդունել է մահմեդականություն և որպես ատամնաբույժ շարունակել աշխատել այդտեղ: Նա 1924թ. Սվազից տեղափոխվել է Կ. Պոլիս, իսկ 1925թ. Կ. Պոլսից ներգաղթել է Խորհրդային Հայաստան: Երևանում ապրել է մինչև 1973թ., մահացել է 81 տարեկան հասակում, իրենից հետո թողնելով զավակներ, թոռներ, ծոռներ: